**Էրթանք սարերը սէյրան**

1. Ման արի մանիդ մեռնեմ,
 Մանդըր տերև ըռեհան,
 Քո չինար բոյիդ մեռնեմ,
 Էրթանք սարերը սէյրան:

 Էրթանք սարերը սէյրան,
 Տեսնենք՝ ու՞մ յարն է ջէյրան:

2. Ես դուշ եմ թևըս դեղին,
 Մանդըր տերև ըռեհան,
 Ման գուկան նանիս գեղին:
 Էրթանք սարերը սէյրան:

 Էրթանք սարերը սէյրան,
 Տեսնենք՝ ու՞մ յարն է ջէյրան:

3. Ծաղիկ ես փնջի միջին,
 Մանդըր տերև ըռեհան,
 Անուշ կաթ՝ սընձի միջին:
 Էրթանք սարերը սէյրան:

 Էրթանք սարերը սէյրան,
 Տեսնենք՝ ու՞մ յարն է ջէյրան:

4. Խնձոր ես ծառի վրա,
 Մանդըր տերև ըռեհան,
 Ծաղիկ ես սարի վրա:
 Էրթանք սարերը սէյրան:

 Էրթանք սարերը սէյրան,
 Տեսնենք՝ ու՞մ յարն է ջէյրան:

5. Արև ելավ էն սարից,
Մանդըր տերև ըռեհան,
Կաքավ կանչեց էն քարից:
Էրթանք սարերը սեյրան:

Էրթանք սարերը սեյրան,
Տեսնենք՝ ու՞մ յարն է ջեյրան: